

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Լուսինն Գեղամի Մադաթյան

ԺԱՄԱՆԱԿ ՀԱՄԿԱՑՈՒՅԹԻ ԱՌԿԱՑԱՑՈՒՄԸ

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

(ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ)

Ժ.02.07 - «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Թ., պրոֆեսոր Ելենա Սարիբեկի Մխիթարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Արմինե Արամի Սիմոնյան
Բ.Գ.Թ., դոցենտ Գոհար Էդուարդի Մելիքյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023թ. դեկտեմբերի 20-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ ԲՈԿ-ի Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թվականի նոյեմբերի 14-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
Բ.Գ.Պ., պրոֆեսոր՝



Գայանե Հարությունի Մուրադյան

Ժողովրդական հեքիաթների ուսումնասիրությամբ զբաղվել են տարբեր գիտակարգեր: Վերջիններս դիտարկում են հեքիաթն իբրև եզակի տեքստ՝ մի շարք կառուցվածքային յուրատիպ առանձնահատկություններով և լեզվառձական նրբմաստններով: Սակայն վերջին տարիներին, ժամանակակից լեզվաբանական ուղղությունների ձևավորմանն ու զարգացմանը զուգընթաց, նկատվում է հեքիաթի տեքստի լեզվական հետազոտությունների քանակային աճ: Այս միտումը նպաստել է նոր գիտակարգի՝ լեզվաբանագիտության ձևավորմանը, որի ուսումնասիրության կենտրոնում ոչ թե պատմության հրաշապատում անցքերի հաջորդականությունն է կամ անհավատալի իրադարձություններով հարուստ դիպաշարը, այլ ինքնատիպ և տարբերվող լեզվանյութը:

Ժողովրդական հեքիաթների լեզվանյութի հետազոտությունները կարևոր ներդրում են ազգային մշակույթի ըմբռնման գործում: Դրանք արտացոլում են ոչ միայն անցյալի, այլև ներկայիս ազգային մտածողության ինքնատիպությունը և աշխարհայացքի առանձնահատկությունները:

Տարբեր ժողովուրդների բանահյուսական լեզվանյութի համեմատական ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել դիպաշարերի, գեղարվեստական պատկերների առանձնահատկությունները և տարբերակել լեզվական միջոցների զուգամետ ու տարամետ հատկանիշները:

Այսպիսով, ատենախոսության **օբյեկտը** *Ժամանակ* հասկացույթի առկայացումն է հեքիաթում: Ատենախոսության ուսումնասիրության **առարկան** ժամանակի հայեցակարգավորման (conceptualization) արտահայտչամիջոցներն են բրիտանական և հայկական հեքիաթների համատեքստում՝ ճանաչողական լեզվաբանության լույսի ներքո:

Սույն հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է ճանաչողական լեզվաբանության դրույթների հիման վրա տեքստի հետազոտության նկատմամբ աճող հետաքրքրությամբ: Լեզվի և գիտակցության խաչմերուկում *Ժամանակ* հասկացույթի առկայացման քննությունը բերում է ժամանակ արտահայտող լեզվական միջոցների առավել բազմաշերտ ու խորքային ուսումնասիրության: Բացի այդ, բրիտանական և հայկական հեքիաթների համատեքստում ժամանակ հասկացույթի զուգադրական վերլուծությունը ճանաչողական լեզվաբանության դրույթների կիրառմամբ հնարավորություն է տալիս ի հայտ բերել հեքիաթի պատումին բնորոշ առանձնահատուկ իմաստային տարրերը և հեքիաթի տեքստի շրջանակներում արտացոլվող լեզվամտածողության դրսևորումները:

Աշխատանքի **գիտական նորույթն** այն է, որ առաջին անգամ փորձ է արվում ճանաչողական լեզվաբանության միջոցով վերհանել *Ժամանակ* հասկացույթի առկայացման զուգամետ ու տարամետ հատկանիշները բրիտանական և հայկական ժողովրդական հեքիաթներում: Նաև առաջին անգամ փորձ է արվում ճանաչողական լեզվաբանության լույսի ներքո կիրառել ժամանակի հայեցակարգավորման կադապարումը բրիտանական հեքիաթներում՝ զուգադրելով հայկական հեքիաթանյութի հետ:

Ատենախոսության **նպատակն** է ուսումնասիրել ժամանակի հայեցակարգավորման և արտապատկերման տարաբնույթ ձևերը ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից բրիտանական հեքիաթների համատեքստում՝ հայկականի գուգադրությամբ:

Այս նպատակն իրականացնելու համար աշխատանքում առաջադրվում են հետևյալ **խնդիրները**

- ❖ համակողմանի վերլուծության ենթարկել ճանաչողական լեզվաբանության մեջ լեզվի ու ճանաչողության անքակտելիության հիմնահարցը, վերլուծել հեքիաթի տեքստում ժամանակի դրսևորման ձևերը և ընդգծել *ժամանակ* հասկացույթի առկայացման ուսումնասիրության նպատակահարմարությունը ճանաչողական լեզվաբանության հիմնադրույթների կիրառման միջոցով,
- ❖ ստեղծել ժամանակի հայեցակարգավորման կադապարը՝ հիմք վերցնելով ճանաչողական լեզվաբանության դրույթները,
- ❖ կատարել բրիտանական հեքիաթի սյուժեի զարգացման տարածական և ժամանակային ուղիների հանգամանակից վերլուծություն՝ համեմատելով վերջիններս հայկական հեքիաթներում հանդիպող նման անցումների քննարկ հատկանիշների հետ,
- ❖ ուսումնասիրել *ժամանակ* հասկացույթի առկայացման լեզվական միջոցների գուգամետ և տարամետ հատկանիշները, որոնք բխում են ազգային մտածողության տարբեր դրսևորումներից, այն աշխարհագրական վայրերի դիրքերից, կառուցվածքներից, որտեղ գրի են առնվել տվյալ հրաշապատում տեքստերը,
- ❖ բացահայտել և տարանջատել կայուն բանաձևերում ժամանակի հայեցակարգավորման կառուցվածքային ու գործառույթային առանձնահատկությունները,
- ❖ ուսումնասիրել բրիտանական և հայկական հեքիաթներում կիրառվող հասկացական փոխաբերության ու փոխանունության միջոցով ժամանակի հայեցակարգավորման առանձնահատկությունները, ինչպես նաև առաջարկել դրանց համակարգված դասակարգման սկզբունքներ, խմբավորել բրիտանական և հայկական հեքիաթներում ամենից հաճախ գործածվող ժամանակի հայեցակարգավորման համակցական փոխաբերությունները և փոխանունությունները՝ վեր հանելով դրանց արտապատկերման ճանաչողական հատկանիշները,
- ❖ ելնելով ուսումնասիրվող լեզվանյութից՝ վերլուծել *ժամանակ* հասկացույթի խոտորումները բրիտանական և հայկական հեքիաթներում, բացահայտել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները:

Ուսումնասիրության համար որպես **մեթոդական հիմք** են ծառայել ճանաչողական լեզվաբանության հիմնադրույթները (Ջ. Լակոֆ, Մ. Ջոնսոն, Ռ. Լանգաքեր, Ռ. Չեյֆ, Վ. Էվանս, Չ. Ֆիլմոր), ժամանակի և տարածության հարաբերակցության տեսությանը (Մ. Բախտին), լեզվաբանագիտության գիտակարգի

ձևավորմանն ու զարգացմանը (Լ. Խրոլենկո, Ս. Նիկիտին, Ա. Ջիվանյան), հեքիաթի ձևաբանությանը (Վ. Պրոպ), հեքիաթի ժամանակի դասակարգմանը (Չ. Ջեյտոն, Դ. Լիխաչով, Վ. Չերվանևա և Ե. Արտեմենկո), հեքիաթի հոգեբանական մեկնաբանությանը (Ս. Լ. ֆոն Ֆրանց, Բ. Բետեխայմ) նվիրված գիտական աշխատանքները:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են ճանաչողական մեկնաբանության, ճանաչողական կադապարաստեղծման, համեմատության և զուգադրման, համատեքստային վերլուծության **մեթոդները**:

Ատենախոսության համար որպես **փաստական նյութ** ընտրվել է բրիտանական և հայկական ժողովրդական հեքիաթների լեզվանյութը: Անհրաժեշտության դեպքում օգտագործվել են նաև օրինակներ հայկական հեքիաթների մշակումներից՝ անգլիական օրինակների զուգադիր հենքի վրա որոշ ժամանակային արտահայտչամիջոցների առավել պատկերավոր վերլուծության նպատակով:

Ատենախոսության **տեսական արժեքը պայմանավորված է** հետազոտության արդյունքներով, որոնք կարող են որոշակիորեն նպաստել հեքիաթի տեքստի ուսումնասիրության հետագա զարգացմանը, ինչպես նաև դրական ազդեցություն ունենալ համադրական լեզվաբանության զարգացման ոլորտի վրա: Աշխատանքում առաջարկված կադապարումը կարող է որպես հիմք ծառայել նոր հետազոտությունների համար, որոնք ուղղված կլինեն ճանաչողական կադապարների միջոցով հեքիաթի այլ տարրերի ուսումնասիրությանը:

Ներկայացված աշխատության **գործնական արժեքն** այն է, որ կատարված հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ճանաչողական լեզվաբանության, լեզվաբանագիտության, զուգադրական ոճագիտության և բանագիտական թեմաներով դասախոսություններում ու սեմինարներում: Ստացված արդյունքները կարող են օգտագործվել հեքիաթի, ինչպես նաև այլ տեքստերի հետագա լեզվաճանաչողական ուսումնասիրությունների և վերլուծությունների ընթացքում:

Ատենախոսությունը **բաղկացած է** ներածությունից, երեք գլխից, ծանոթագրությունից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացված են ուսումնասիրության օբյեկտը, առարկան, աշխատանքի նպատակն ու խնդիրները, թեմայի արդիականության հիմնավորումը, նորույթը, մեթոդները և մեթոդական հիմքը, հիմնավորվում են տեսական և գործնական արժեքները, պարզաբանվում է աշխատանքի կառուցվածքը:

Առաջին գլուխը, որը ներկայացված է «**Ժամանակ հասկացույթի տեսական հիմքերը**» վերնագրով, բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին ենթագլխում («**Լեզու և ճանաչողություն**») դիտարկվում են ճանաչողական լեզվաբանության տարբեր հետազոտողների մոտեցումները և տեսական դրույթները: Նրանք լեզուն դիտարկում են որպես նշանային համակարգ, ինչպես նաև՝ ճանաչողության և մտածողության

մաս¹: Մանրակրկիտ ներկայացվել է լեզվի ուսումնասիրության մեջ ճանաչողության դերը և որոշարկվել է ճանաչողական գործընթացների ազդեցությունը լեզվի վրա:²

Երկրորդ ենթագլխում (**«Ժամանակ հասկացույթը, ժամանակի և տարածության հարաբերակցությունը»**) ներկայացվում են տարբեր գիտակարգերում ժամանակի և տարածության փոխկապվածության վերաբերյալ ընդհանրական մոտեցումները: Անդրադարձ է կատարվում տարածական եզրույթներով ժամանակի հայեցակազմվորման տարբեր մեկնություններին: Ընդգծվել և կարևորվել է ճանաչողական լեզվաբանների հատկապես Ջ. Լակոֆի և Մ. Ջոնսոնի պնդումն առ այն, որ ժամանակի վերացական տիրույթը հայեցակարգավորում է ավելի հստակ տիրույթով, ինչպիսին են տարածքը, շարժումը և իրադարձությունը:³

Երրորդ ենթագլխում (**«Հեքիաթը որպես լեզվաբանագիտական ուսումնասիրության առարկա»**) ուսումնասիրվում են լեզվաբանագիտության ձևավորման հիմնական դրույթները: Հիմնավորվում է ճանաչողական լեզվաբանության և ուսումնասիրվող թեմայի միջև կապի ստեղծման նպատակահարմարությունը: Համաձայն կատարված հետազոտության՝ բանահյուսության լեզուն ժողովրդի մշակութային ավանդույթի կարևորագույն բաղադրիչների կրողն է, որն ակներև է դարձնում տվյալ ազգի լեզվամտածողությունը: Եթե բանահյուսության լեզուն լեզվամտածողության կրողն է, ապա այն նաև կարելի է համարել մարդու ճանաչողության ամբողջ համակարգի արտացոլանքը:

Չորրորդ ենթագլխում (**«Ժամանակի առկայացումը հեքիաթի համատեքստում»**) քննվում են տարբեր տեսաբանների՝ հեքիաթի ժամանակային հայեցակերպին վերաբերող մեկնություններն ու դրույթները, ներկայացվում են բրիտանական և հայկական հեքիաթներում *ժամանակ* հասկացույթի վերլուծության կարևորության հիմնավորումները: Համաձայն կատարված ուսումնասիրությունների՝ ժողովրդական հեքիաթները պատմական փաստաթղթեր են,⁴ ինչպես նաև արտահայտում են մարդկային հավաքական հոգեկան գործընթացները, որոնք ավելի մեծ ճանաչողական արժեք ունեն, քան մարդու ենթագիտակցությունն ու ուսումնասիրելու համար կիրառվող ցանկացած այլ փաստական նյութ:⁵

¹ Fauconnier G., Turner M. Conceptual Integration Networks//Cognitive Science, 22 (2) 1998, pp. 133-187. https://doi.org/10.1207/s15516709cog2202_1, Evans V. The Structure of Time. Language, Meaning And Temporal Cognition. Amsterdam/Philadelphia: John Benjamins Publishing Company, 2004, 287 p., Janda L. Cognitive Linguistics in the Year 2015//Cognitive Semantics, 1(1), 2015, pp. 132–154. DOI:10.1163/23526416-00101005

² Демьянков В. З. Когнитивная лингвистика как разновидность интерпретирующего подхода//Вопросы языкознания, № 4, 1994, С. 17-33. <https://vja.ruslang.ru/ru/archive/1994-4/17-33>

³ Lakoff G., Johnson M. Philosophy in the Flesh; The Embodied Mind and its Challenge to Western Thought. New York: Basic Books, 1999, 590 p.

⁴ Dundes A. The Meaning of Folklore the Analytical Essays of Alan Dundes. Bronner S. (ed.), Utah: Utah State University Press Logan, 2007, 462 p.

⁵ von Franz M.-L. The Interpretation of Fairy Tales. Colorado: Shambhala, 2017, 265 p.

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Ժամանակի առկայացման տարածական հայեցակերպը բրիտանական և հայկական ժողովրդական հեքիաթներում» վերնագրով, բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլուխը («Ժամանակի հայեցակարգավորման տարածական կաղապարը») նվիրված է բառային միջոցներով ժամանակ հասկացույթի առկայացմանը: Ճանաչողական լեզվաբանության դրույթների օգնությամբ ստեղծվել է ժամանակի հայեցակարգավորման կաղապար և կատարվել է ժամանակային կաղապարներից ածանցվող ենթակաղապարների մանրամասն ձևաբանական, քերականական վերլուծություն: Ելնելով տարածքի և ժամանակի սերտ փոխկապակցվածությունից՝ ժողովրդական հեքիաթներում հստակ գործողությունը դիտարկվում է որպես փոխաբերականացված ժամանակային **կետ** իր ենթակաղապարներով՝ **որոշարկված կետ** (*on the next day, հաջորդ օրը*), **մոտավոր կետ** (*about 12 o'clock, հազիվ հինգ ամսական*), **հարաբերական կետ** (*now, հիմի*), **անորոշ կետ** (*one night, մի օր*):

Իրադարձությունների, գործողությունների և նմանատիպ այլ երևույթների միջև ընկած ժամանակահատվածը դիտարկվում է որպես ժամանակային **միջակայք**, որի ենթակաղապարներն են՝ **որոշարկված միջակայք** (*from morning till night, օրը մինչև իրիկուն*), **պայմանականորեն որոշարկված միջակայք** (*within a month, մի ակնթարթում*), **մոտավոր միջակայք** (*about 3 or 4 months, անցավ տասը տարի կամ մի քիչ ավելի կամ պակաս*), **անորոշ միջակայք** (*for some time, միառժամանակ*):

Ժամանակային համատեքստում **գիծը** հայեցակարգվում է որպես հատուկ սահմաններ չունեցող տարր: Առանձնացվել են ժամանակային գծի հետևյալ ենթակաղապարները՝ **ուղիղ գիծ** (*forever, միշտ*), **կետագիծ** (*at times, երբեմն*), **հեռանկարային գիծ** (*after a night and day, մի ժամից հետո*): Կրկնվող գործողությունները, հաջորդական կատարվող իրադարձությունները կամ երևույթները համարվում են **շրջան** (*every night, ամեն օր*): Բազմաբնույթ իրավիճակներով և իրադարձություններով հագեցած ժամանակահատվածը բնութագրվում է որպես **շրջանագիծ** (*two hours of the watch, տանը եղած ժամանակ*): Ընդհանուր ժամանակահատվածից առանձնացվող մասը դիտարկվում է որպես **շրջանակի հատված** (*the early morning of the morrow's day, քսան օրից արդեն տասն օր էլ անցել էր*): Հետագոսության արդյունքներից ելնելով՝ կարող ենք նշել, որ այս ժամանակային կաղապարները և ենթակաղապարները համընդհանուր բնույթ են կրում: Անկախ լեզվական տարբերություններից՝ բրիտանական և հայկական հեքիաթներում ժամանակը արտապատկերվում է ավելի հստակ տիրույթով՝ տարածքով:

Երկրորդ ենթագլխում («Ժողովրդական հեքիաթների գլխավոր հերոսների տարածական և ժամանակային տեղափոխությունը») կատարվել է հեքիաթի զարգացման տարածական և ժամանակային ուղիների վերլուծություն: Հեքիաթում իրադարձությունները հիմնականում զարգանում են երկու ուղղությամբ: Ուղղություններից մեկը հեքիաթի գլխավոր հերոսի տարածական տեղափոխության նկարագրությունն է: Երկրորդը մյուս բարի կամ չար հերոսների գործողությունների նկարագրությունն է: Տարածական տեղափոխությունները առանձնանում են նրանով,

որ գլխավոր հերոսներն իրենց առաքելությունն իրականացնելիս հասնում են ինչ-որ տարածք, հետո վերադառնում են նույն տարածական կետը, որտեղից սկսվել էր իրադարձությունների զարգացումը: Մինչդեռ չար հերոսը չի ունենում տարածական տեղափոխություն կամ եթե ունենում է, ապա բացակայում է հետ վերադարձի փուլը:

Երկու ժողովուրդների հեքիաթներում տարածական անցումների տարբերությունն այն է, որ ոչ բոլոր տարածական անվանումներն են առկա: Բրիտանական հեքիաթներում գործածվում է հստակ աշխարհագրական նկարագիր պարունակող բառապաշար, օրինակ *անտառ, հովիտ, կիրճ, լեռ, բլուր*: Մեր ուսումնասիրած հայկական հեքիաթներում վերջիններս գրեթե չեն հիշատակվում: Ավելի շատ կիրառվում է սար տարածական գոյականը՝ ելնելով հայկական բնաշխարհի լանդշաֆտային առանձնահատկություններից:

Ժողովրդական հեքիաթի հերոսները տեղաշարժվում են ոչ միայն տարածության մեջ, այլև ժամանակի: Չնայած այն փաստին, որ հեքիաթներում ժամանակային ցուցիչների գործածությունը երբեմն բացակայում է, տարածական տեղափոխությունները և դրանց առնչվող եզրույթները արդեն ենթադրում են ժամանակային անցում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեքիաթը սկսվում է անորոշ ժամանակով, ունենում է որոշակի զարգացում, և ավարտվում է նույն անորոշ ժամանակով՝ արտահայտված բացող և փակող կայուն բանաձևերով:

Երրորդ ենթագլուխը (**«Ժողովրդական հեքիաթի կայուն բանաձևերը՝ որպես ժամանակ հասկացության բաղկացուցիչ տարր»**) գլխավորապես նվիրված է բրիտանական և հայկական հեքիաթներում հանդիպող այն կայուն բանաձևերի կառուցվածքային ու գործառույթային առանձնահատկությունների ուսումնասիրությանը, որոնք հատուկ իմաստ են հաղորդում հեքիաթի ժամանակի նկարագրությանը: Աշխատանքում կայուն բանաձևերը դիտարկվում են իբրև ճանաչողական կաղապարներ, քանի որ դրանք լոկ բառարանային իմաստ արտահայտող լեզվական միավորներ չեն: Այս բանաձևերն ընկալվում են հենքային ճանաչողական գիտելիքների և լեզվական միավորների արտահայտած իմաստի համադրության միջոցով:

Ե՛վ բրիտանական, և՛ հայկական ժողովրդական հեքիաթների **բացող բանաձևերը**, իրացնելով նույն գործառույթը, կառուցվածքային առումով տարբեր են: Բրիտանական հեքիաթներում ամենալայն տարածում գտած բացող բանաձևը *once upon a time*-ն է, հայկական հեքիաթներում՝ *լինում է, չի լինում*-ը: Հայերենում այն արտահայտվում է անկատար ներկա ժամանակաձևով և եզակի թվով (*լինում է*): Մինչդեռ անգլերեն բացող բանաձևում արտահայտված չեն քերականական թիվը և ժամանակը (*once upon a time*): Վերջիններս արտահայտվում են սկսվածքին հաջորդող կայուն բառակապակցություններով՝ *there was/were, there lived*, որոնք կատարում են նույնպիսի գործառույթ, ինչպիսին *լինում է* միավորը հայկական հեքիաթում: Միակ տարբերությունն այն է, որ դրանք արտահայտվում են ոչ միայն եզակի, այլև հոգնակի թվով և անցյալ ժամանակաձևով (*there was/were*): Նշենք, որ հայերեն *լինում է, չի լինում* բացող կայուն բանաձևը կազմված է երկու մասից՝ առաջին մասը հաստատական է՝ *լինում է*, երկրորդը՝ ժխտական՝ *չի լինում*: Ճանաչողությունից

ելնելով՝ հաստատական հատվածը իրողության զգացողություն է ձևավորում, մինչդեռ հաջորդող ժխտականը չեզոքացնում է ստեղծված իրողության պատկերը, ըստ այդմ՝ հեքիաթի հենց սկզբից ենթադրվում է, որ հաջորդող պատմությունը, թերևս, չի համապատասխանում իրականությանը:

Բրիտանական հեքիաթներում կա բացող բանաձևերի մի խումբ, որտեղ *time* բառի պարբերական խաղարկումը գեղարվեստական անորոշության մթնոլորտ է ստեղծում հաջորդող իրադարձությունների շուրջ (*Once upon a time, and a very good time it was, though it wasn't in my time, nor in your time, nor anyone else's time, there was.*):⁶ Այստեղ հիմնականը հերքելն է, որը ճանաչողության մեջ ձևավորում է անիրականի և անհավանականի մտապատկեր: Նշված բանաձևը հատուկ հնար է, որը նպատակ ունի անորոշության մեջ գցել ունկնդրին և իրադարձությունների իսկությանը հավատալու իրավունքը թողնել վերջինիս:

Զուգահեռներ անցկացնելով հայկական ժողովրդական հեքիաթների հետ՝ նշենք, որ հայկական հեքիաթաշարում նույնպես կան նման բացող բանաձևեր, որտեղ *էլնէլ (լինէլ)* բայի հաստատական և ժխտական ձևերի բազմակի կրկնությունը հեքիաթի հենց սկզբից ձևավորում է տեղի և ժամանակի անստուգության զգացողություն (*Գէլնի, չ'էլնէ. կէլնի, չ'էլնէ. կէլնի, չ'էլնէ...*):⁷

Միջանկյալ բանաձևերը նույնպես պատումի անորոշ ժամանակն արտապատկերելու փոխաբերացված կադապարներ են: Դրանք ժանրային բնորոշ հնարներ են, որ զերծ են պահում փաստական տեղեկություն ներկայացնելու անհրաժեշտությունից (*on a night of nights, twenty nights and twenty days, օրվա մեկը, օրերն մի օր*):

Երկու լեզուների հեքիաթներում ժամանակային միջանկյալ բանաձևերը գրեթե նույնական են թե՛ կառուցվածքային, թե՛ իմաստային առումով: Այս բանաձևերում հստակ ընդգծվում է ժամանակի և տարածության փոխհարաբերակցությունը: Տարածական եզրույթները ժամանակի փոխաբերականացված արտահայտություններն են, որոնք շեշտադրում են ոչ միայն երկար տարածությունը, այլև ժամանակի երկար տևողությունը (*went on for miles and miles*): Ի տարբերություն բրիտանական հեքիաթների՝ հայկական հեքիաթներում հանդիպում ենք թվային նշումով տարածական անվանում պարունակող միջանկյալ բանաձևերի (*օխտը սար, օխտը ձոր անցան*), որոնք խորհրդանշանային իմաստ ունեն և ավելի են որոշարկում ժամանակային երկար հոսքը:

Եթե ժողովրդական հեքիաթի պատումում բացող բանաձևի գործառույթն այլաշխարհի ու այլ ժամանակային գոտի տեղափոխվելու սկզբի հայտարարումն է, ապա **փակող բանաձևերը** այլաշխարհի և այլ ժամանակային գոտու ավարտի

⁶ Jacobs J. The Well of the World's End. English Fairy Tales, 1890.

<https://www.sacredtexts.com/neu/eng/eft/eft32.htm>

⁷ Շերենց Գ. Պառավի և անձեղի, Վանա Սագ, Վասպուրականի ժողովրդական երգերի, հեքիաթների, առածների և հանելուկների հավաքածոց, առաջին մաս, Թիֆլիս, տպարան Հովհաննես Մարտիրոսեանցի, 1885, 187 էջ:

ագրարարումն են: Բացի ավարտի գործառույթից, փակող բանաձևերը ժամանակային անորոշություն են ստեղծում:

Հատկապես ուշադրության են արժանի փակող այն բանաձևերը, որտեղ հեքիաթի պատումի ժամանակահատվածը կապվում է ունկնդրի ներկայի հետ: Մինևույն ժամանակ ստեղծվում է անորոշ ժամանակի տպավորություն: Այս զգացողությունը ձևավորվում է ճանաչողական կաղապարով, քանի որ ժամանակը հասկանալու համար նախևառաջ պետք է հստակեցնել պատմելու ժամանակակետը (*they are alive to this very day, ընչանք հսի էլ չի պրծե*): Նշված փակող բանաձևերում ուշագրավ է այն գործառույթը, երբ ասացողները *this (այս)* ցուցական դերանվան ու *day (օր)* գոյականի և *հսի (հիսա)* մակբայի կիրառությամբ կապի մեջ են մտնում ունկնդրի հետ՝ վերջինիս մտքում թողնելով տպավորություն, թե այս հրաշապատում դեպքերը իրողություն են: Բայց եթե հաշվի առնենք, որ հեքիաթը սերնդեսերունդ փոխանցված պատում է և ամեն անգամ, անկախ այն փաստից, թե երբ է պատմվում, ավատվում է նույն բանաձևով, ապա նշված արտահայտությունները նույնպես կարող ենք համարել անորոշ ժամանակ արտահայտող կաղապարներ:

Աշխատանքի երրորդ գլուխը վերնագրված է «**Ժամանակի արտապատկերման ձևերը բրիտանական և հայկական ժողովրդական հեքիաթներում**», որը բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլխում («**Փոխաբերությունը և փոխանունությունը՝ որպես ժամանակի հայեցակարգավորման ճանաչողական կաղապար**») ուսումնասիրվել է ժամանակի հայեցակարգավորումը հասկացական փոխաբերությունների և փոխանունությունների միջոցով:

Սույն ենթագլխի առաջին ենթաբաժնում առաջարկվել են հասկացական փոխաբերության հետևյալ կաղապարները՝ **ժամանակը շարժվող սուբյեկտ է, ժամանակը տարածություն է, ժամանակն առարկա է**, որոնց հիմքում ընկած է **շարժում, տարածություն, կյուրական առարկա** պատկեր-սխեմաները:

Ժամանակը շարժվող սուբյեկտ է հասկացական փոխաբերության առաջին խմբի հիմքում ընկած է Ջ. Լակոֆի և Մ. Ջոնսոնի առաջարկած շարժվող ժամանակ փոխաբերական կաղապարը, որի միջոցով ժամանակը զուգորդվում է շարժվող առարկայի հետ (*months and years came and went, three years was nearing, վայստ ու ժամանակ որ անցավ*)⁸:

Ժամանակը տարածք է հասկացական փոխաբերության այս կաղապարի վերլուծության մեջ ընդգրկվել են այնպիսի օրինակներ, որոնք առավել շատ են գործածվում հեքիաթներում: Ուսումնասիրած տեքստերում հանդիպում ենք հասկացական փոխաբերությունների, որտեղ տարածական չափումն արտահայտված է ժամանակային եզրույթներով (*a walk of a year and a day, day's journey, երկու օր ճամբա էկավ, իրեք օրավար տեղ*): Օրինակներում տարածությունը չի ստանում թվային բնութագիր: Փոխարենը տարածության չափման միջոց է դառնում ժամանակը՝ թվային միավորներով:

⁸ Lakoff G., Johnson M. *Philosophy in the Flesh; The Embodied Mind and its Challenge to Western Thought*. New York: Basic Books, 1999, 590 p.

Ժամանակը առարկա է փոխաբերական կաղապարում ուշագրավ է այն, որ ժամանակը հայեցակարգավորվում է որպես սեփականություն: Այս խմբի համար նախահիմք է ծառայում ճանաչողական լեզվաբանության այն դրույթը, որ մարդը ժամանակը համարում է արժեքավոր իր:⁹ Հեքիաթի համատեքստում, որտեղ ժամանակը դիտարկվում է իբրև սեփականություն, այն պատկանում է ուժեղին, իսկ թույլը՝ ժամանակ ինդրոդն է (*could get a day and a year, took thus a day and a year, lost no time, տաս օր ժամանակ կտամ, իրեք օր ժամանակ ուզեց*):

Այս բաժնում առանձնացվել և վերլուծվել են նաև ժողովրդական հեքիաթներում հաճախակի հանդիպող այնպիսի փոխաբերական կաղապարներ, որտեղ *ժամանակ* բառը իսպառ բացակայում է: Ժամանակի անուղղակի դրսևորումները դասակարգվել են ըստ հետևյալ ճանաչողական կաղապարների՝ **տարածքն անուղղակի ժամանակ է, գործողությունն անուղղակի ժամանակ է, առարկան անուղղակի ժամանակ է**: Այս կաղապարները խարսխված են **տարածություն, շարժում, առարկա** պատկեր-սխեմաների վրա, ինչպես նաև օժանդակ **գործողություն, վարքագիծ** սխեմաների վրա, որոնք օգնում են հասկանալ *ժամանակ* հասկացույթի արտապատկերման բարդ գործընթացը:

Տարածքն անուղղակի ժամանակ է փոխաբերական այս կաղապարը խարսխված է **տարածություն** պատկեր-սխեմայի վրա: Ե՛վ բրիտանական, և հայկական հեքիաթներում ժամանակը հաճախ է ընկալվում այն տարածքների թվարկմամբ, որտեղով անցնում է հեքիաթի հերոսն իր նպատակին հասնելու համար:

Տարածությունը բնութագրող տեղանուններից բացի, ժամանակային փոխաբերականացված կաղապարները դրսևորվում են նաև տարածական մակբայներով (*wandering down and up; went on, and on, and on, and on; went along, and along and along*): Շարժում արտահայտող բային հաջորդող նախդիրները երկարաշունչ տևողության պատկեր են ստեղծում, ինչը պատումին հաղորդում է նաև ռիթմիկ հնչողություն: Հավելենք, որ հայկական հեքիաթներում նման օրինակները բացակայում են:

Գործողությունն անուղղակի ժամանակ է փոխաբերական կաղապարի ճանաչողական արտապատկերման հիմքը **շարժում** պատկեր-սխեման է՝ **գործողություն** օժանդակ սխեմայով: Երկու լեզուների հեքիաթներում հաճախ են հանդիպում շարժում ցույց տվող բայերի երկակի կամ եռակի կրկնության, որոնք էլ դառնում են ոչ միայն գործողություն, այլև երկար ժամանակահատված արտահայտելու միջոց (*travel, fought, qinaw*՝ հաճախ բարբառային *էթալ* տեսքով):

Այս խմբում վերլուծվել են նաև այնպիսի փոխաբերականացված կաղապարներ, որոնց ճանաչողական արտապատկերման հիմքը **շարժում** պատկեր-սխեմայի հետ մեկտեղ **վարքագիծ** օժանդակ սխեման է: Հաճախ վարքագիծը կարող է դառնալ ժամանակի արտապատկերման միջոց: Բրիտանական և հայկական հեքիաթաշարում հանդիպում ենք հեքիաթների (“Tattercoats”, «Չար պառավը»), որտեղ

⁹ Lakoff G., Johnson M. *Metaphors We Live by*. Chicago: The University of Chicago, 1980, 242 p.

ժամանակը հայեցակարգվում է արտաավելու և արդյունքում գոյացած գեոի պատկերման միջոցով:

Առարկան անուղղակի ժամանակ է փոխաբերության խմբում առանձնացրել ենք հեքիաթներում հանդիպող այնպիսի դրվագներ, որտեղ առարկան վերածվում է ժամանակը քողարկող ճանաչողական կադապարի: Բրիտանական “Bailie Lunnain”¹⁰ հեքիաթի գլխավոր հերոսը ճանապարհ է ընկնում փնտրելու այն կնոջը, ում տեսել է երազում: Նա թափառում է աշխարհով մեկ և ծախսում իր ամբողջ գումարը: Երբ հասնում է Լոնդոն, նրա շորերը մաշված են լինում: Այստեղ ժամանակի ուղղակի նկարագրություն չկա: Ժամանակի տևողությունը ընկալվում է մի կողմից տեղանունների թվարկմամբ, մյուս կողմից՝ մաշված հագուստի նկարագրությամբ (*his clothes were worn*), որն ավելի է շեշտում ժամանակի երկար ընթացքը և պատկերավոր է դարձնում հերոսի տառապանքները: Նմանօրինակ դրվագների հանդիպում ենք նաև հայկական ժողովրդական հեքիաթներում: Հայկական «Հաբրմանի»¹¹ հեքիաթում մաշված կոշիկը ծառայում է որպես ժամանակի անուղղակի արտապատկերման կադապար:

Երկրորդ ենթաբաժնում («**Հասկացական փոխանունություններ**») քննության են առնվում բրիտանական և հայկական հեքիաթներում առավել հաճախ հանդիպող հասկացական փոխանունության հետևյալ խմբերը՝ **ժամանակի արտապատկերումը ավանդական տոների միջոցով, ժամանակի արտապատկերումը գյուղատնտեսական աշխատաքների միջոցով, ժամանակի առկայացումը կենցաղավարության միջոցով, ժամանակի առկայացումը բնության երևույթների միջոցով, ժամանակի առկայացումը պատմական նշանակություն ունեցող անձանց անունների միջոցով (իրական, անիրական):**

Ժամանակի արտապատկերումը ավանդական տոների միջոցով փոխանունությունը քննելիս հաշվի է առնվել, որ ժողովրդական հեքիաթներում, կախված ժանրի բնույթից, օրացուցային ժամանակը չի կարևորվել: Փոխարենը կարևոր իրադատություններ են եղել ավանդական տոները, որոնք էլ իրենց արտացոլումն են գտել ժողովրդական հեքիաթներում՝ որպես ժամանակի հայեցակարգավորման յուրատիպ հնարներ՝ ընդգծելով փոխանունության ենթագիտակցական կիրառության գործոնը: Իռլանդական “Jamie Freel and the Young Lady”¹² հեքիաթի ամբողջ տեքստի մեջ ժամանակը պատկերվում է *Halloween* ավանդական տոնի միջոցով: Ենթադրվում է, որ լսողը իր մտածական պատկերում արդեն ունի հստակ գաղափար այս տոնի վերաբերյալ և *Halloween* ծեսը կրնկալի իբրև հստակ ժամանակահատված՝ նույնացնելով այն հոկտեմբեր ամսվա վերջին շաբաթվա հետ:

¹⁰ Campbell J. Bailie Lunnain. Popular Tales of the West Highlands, vol. I, 1890. <https://www.sacred-texts.com/neu/celt/pt1/index.htm>

¹¹ Հայ ժողովրդական հեքիաթներ, շ. 4, Հաբրմանի, Երևան, ՀՄՄՀ ԳՄ. Հրատ., 1963, 521 էջ:

¹² Ashliman D. Jamie Freel and the Young Lady. Abducted by Aliens, 1999-2022.

<https://sites.pitt.edu/~dash/abduct.html#kelly>

Հայկական «Տան դովլաթը»¹³ հեքիաթում տերը ծառային առաջարկում է չշտապել և գնալ Զատկից հետո (...կա գ, զատկից ետը գնա...), որը հայկական եկեղեցու շարժական տոներից է և միշտ նշվում է զարնանը: Այսինքն՝ ժամանակը հայեցակարգվում է ծիսական տոնի օգնությամբ: Ծառային առաջարկվում է գնալ մարտ կամ ապրիլ ամսից հետո:

Ժամանակի արտապատկերումը գյուղատնտեսական աշխատաքների միջոցով փոխանվանական խմբի հիմքը հասարակ գյուղացու համար կենսական կարևորություն ունեցող և առօրյայի անբաժանելի մաս կազմող գյուղատնտեսական փուլերն են, որոնք այնքան են կարևորվել, որ վաղնջական սյուժեներում կիրառվել են ժամանակի փոխաբե: Բրիտանական “The Green Children”¹⁴ հեքիաթում *harvest* բառն ամեննին էլ պայմանավորված չէ զուտ բերքահավաքի գործողությամբ, այլ փոխանվանաբար կիրառվում է գործողության ժամանակահատվածը պատկերելու համար, այն է աշնան ամիսները:

Հայկական «Քյաչալն ու քյոսան»¹⁵ հեքիաթում հենքային գիտելիքները հիմք են ծառայում, որպեսզի ընթերցողը *հնձելու ժամանակ* փոխանունությունն ընկալի իբրև հուլիս ամիս, քանի որ Հայաստանում ցորենը հիմականում հասունանում է այդ ժամանակահատվածում:

Բրիտանական և հայկական հեքիաթանյութի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ **ժամանակի առկայացումը կենցաղավարության միջոցով** առավել շատ գործածություն ունի: Քանի որ տարաբնույթ սարքերով ժամանակի չափման ներկայիս միջոցները կիրառելի չեն եղել, կենցաղի կարևորագույն իրադարձություններն օգտագործվել են իբրև ժամանակի ցուցիչներ՝ վերածվելով յուրատիպ փոխանունությունների (*at dinner, ճաշի վախտ, քշերուայ ժամը տալու վախտին*):

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև **ժամանակի առկայացումը բնության երևույթների միջոցով** փոխանվանական խումբը: Բրիտանական “The lady of Llyan y fan Fach”¹⁶ հեքիաթում բնության երևույթները (...rain and sunshine came and passed away.) ժամանակի հայեցակարգավորման այն միջոցներն են, որոնք ենթադրում են ժամանակի երկար տևողություն:

Հայկական հեքիաթներում ժամանակը նույնպես առկայանում է բնության երևույթներով: Օրինակ՝ «Մոթալի հեքիաթը»,¹⁷ որտեղ ժամանակի հստակեցումը կատարվում է *լիս ու մուրթ չբաժանուած* արտահայտության միջոցով, որն էլ աղջամուղջի պատկերավոր նկարագրությունն է:

¹³ Հայ ժողովրդական հեքիաթներ, Հ. 3, Տան դովլաթը, Երևան, ՀՍՍՌ ԳՍ հրատ., 1962, 671 էջ:

¹⁴ Hartland E. The Green Children. English Fairy and Other Folk Tales. Grey eBook: eBook Edition, 2018. <https://www.globalgreyebooks.com/english-fairy-and-other-folk-tales-ebook.html>

¹⁵ Հայ ազգագրություն և բանահյուսություն, Հ. 16, Քյաչալն ու քյոսան, Երևան, Հայկական ՍՍՀ հրատարակչություն, 1984, 220 էջ:

¹⁶ Riordan J. The Lady of Llyan y Fan Fach. Folk-Tales of the British Isles. Moscow: Raduga, 1987, 368 p.

¹⁷ Նավասարդեանց Ս. Մոթալի հեքիաթը, Հայ ժողովրդական հեքիաթներ, Վաղարշապատ, ՌՅԼԱ, 1882, 64 էջ:

Ժամանակի առկայացումը պատմական նշանակություն ունեցող անձանց անունների միջոցով (իրական, անիրական) փոխանվանական կաղապարը բնորոշ է հատկապես հեքիաթների սկսվածքներին: Ջ. Ջեյքոբսի հավաքագրած “Whittington and his Cat”¹⁸ հեքիաթը սկսվում է “*In the reign of the famous King Edward III*” իրական պատմական կերպարի կիրառությամբ: Էդվարդ Երրորդի հիշատակմամբ փաստվում է, որ պատումը ճշգրիտ փաստերի շուրջ է հյուսվելու: Սակայն սա միայն հետաքրքիր հնար է: Պատմական ժամանակը նշելով՝ ակնկալվում է, որ նկարագրվող իրադարձությունների ճշմարտացիությունն ապահովված է: Ավելին, այդ ազդեցությունն ուժեղացնելու համար հերոսը ներկայացվում է անձնանունով (Dick Whittington):

Հայկական հեքիաթներն առանձնանում են բրիտանականից, քանի որ իրական պատմական կերպարների, թագավորությունների անուններ պարունակող ժամանակային փոխանունությունների կողքին հայկական ժողովրդական հեքիաթներում ներառված են նաև մտացածին թագավորների կամ իշխանների անուններ (*Պոռշ թագավորի օրով...*):¹⁹ Սա ևս իրականության պատկեր ստեղծելու հնար է, բայց միևնույն ժամանակ ոչ այնքան ճշմարտացի լինելով՝ ասացողը ազատում է իրեն պատասխանատվությունից:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում (**«Ժամանակի հոսքի խտտորումները բրիտանական և հայկական ժողովրդական հեքիաթներում»**) քննել ենք հեքիաթի ժամանակի ակնթարթային ու դանդաղ ընթացքը, ինչպես նաև ժամանակային տարրնկալումը որպես փոխաբերական կաղապար՝ իր պատկերասխեմատիկ կառուցվածքով: Այս ենթագլխի առաջին բաժինը (**«Ժամանակի ակնթարթային հոսքը»**) նվիրված է հեքիաթի ժանրին բնորոշ ժամանակի ակնթարթային հոսքի վերլուծությանը: Այստեղ դիտարկվում է **ակնթարթայնությունը ժամանակի խնայողություն է փոխաբերական կաղապարը**, որի հիմքում ընկած է **կախարդանք-ակնթարթայնություն-ժամանակի խնայողություն** պատկեր-սխեման:

Ակնթարթայնությունը ժամանակի խնայողություն է փոխաբերական կաղապարն ակնհայտ դրսևորվում է բրիտանական “The Witch of Lok Island”²⁰ հեքիաթի աղքատ հերոս Հուարնի՝ Լոկ կղզի ուղևորության դրվագում (*In a moment they had reached the witch's home.*): Այս օրինակում կարապը դիտարկվում է որպես հրաշագործ օգնական, որը մեկ րոպեում հերոսին հասցնում է կախարդի տուն: Հեքիաթի ժանրում այս երևույթը դրսևորվում է որպես գերբնական տարր, սակայն ճանաչողության հենքի վրա ընկալվում է իբրև ժամանակի կրճատման միտումնավոր հնար:

¹⁸ Jacobs J. Whittington and his Cat. English Fairy Tales, 1890.
<https://www.sacred-texts.com/neu/eng/ef/ef32.htm>

¹⁹ Հայ ժողովրդական հեքիաթներ, շ. 10, Օսկի արտ, Երևան, ՀՍՄՀ ԳՍ հրատ., 1967, 635 էջ:

²⁰ Masson E. The Witch of Lok Island. Folk Tales of Brittany. 1929.

<https://sacred-texts.com/neu/celt/ftb/ftb07.htm>

Հայկական հեքիաթներում կան դրվագներ, որտեղ գործ ունենք **իրադարձությունների անիրական արագացումը ժամանակի խնայողություն է** կադապարի հետ: Այստեղ ժամանակը ոչ թե ակնթարթային զարգացում է ունենում, այլ պարզապես արագանում է: Ինչպես օրինակ՝ «Մարջում Խոջի հեքիաթը»²¹ հեքիաթի հետևյալ հատվածում՝ «-*Ինչպե՞ս կարելի է մեկ ամսվա ճամփեն այդպես շուտ գա: - Էնոր ձին գուրա*»: Օրինակում ձին նկարագրվում է որպես հրաշագործ օգնական կենդանի, որը երկար ճանապարհը հաղթահարում է անհավանական կարճ ժամանակում: Ձիու կարողությունների նկարագրությունը չափազանցության ուշագրավ դրվագ է, իսկ հրաշապատում կենդանուն տվյալ համատեքստում կարելի է դիտարկել որպես օգնող միջոց՝ փոխաբերականացված կադապարի նմուշ:

Երկրորդ ենթագլխի երկրորդ բաժնում (**«Ժամանակի դանդաղ հոսքը»**) քննության է առնվում հեքիաթներում ժամանակի դանդաղ ընթացքը, որը հստակ ընդգծում է մարդու պատկերացումներն այլաշխարհի և այնտեղ գործող այլ ժամանակի գոյության վերաբերյալ: Ատենախոսության մեջ բրիտանական և հայկական հեքիաթներում արտացոլված ժամանակի դանդաղումը մենք դիտարկում ենք որպես փոխաբերական կադապար՝ **ժամանակի դանդաղ հոսքն առեղծված է**: Վերջինիս հիմքում ընկած է **իրական ժամանակի փոփոխություն-ժամանակի դանդաղեցում-իրական ժամանակի վերականգնում** պատկեր-սխեման:

Իռլանդական “Oisín in Tír na n Óg”²² հեքիաթում հստակ ուրվագծվում է նշյալ փոխաբերական կադապարը, որի գործածությունը պարզվում է ողջ հեքիաթի տեքստը քննելուց հետո: Պատկեր-սխեմայի առաջին երկու դրույթները՝ իրական ժամանակի փոփոխությունը և ժամանակի դանդաղումը տեղի են ունենում, երբ հեքիաթի հերոսը սիրահարվում է սպիտակ ձիով հանկարծակի հայտնված մի գեղեցկուհու և նրա հետ մեկնում *Տիր նա Նոգ* աշխարհ: Պատկեր-սխեմայի երրորդ բաղադրիչը՝ իրական ժամանակի վերականգնումը, տեղի է ունենում, երբ հարազատներին կարոտած հերոսը որոշում է վերադառնալ իր հայրենի երկիր և հողին դիպչելուն պես ծերանում է 300 տարով: Ահա հեքիաթի վերջաբանն է, որ լիովին ուղղորդում է *ժամանակի դանդաղ հոսքն առեղծված է* փոխաբերականացված կադապարի գերահանգմանը:

Վերոնշյալ փոխաբերական կադապարի օրինակներ են պարունակում նաև Իջևանի տարածաշրջանից գրի առնված հայկական «Ըսկանդար թագավորի պատմությունը»²³ և «Մահ չուզող տղան»²⁴ հեքիաթները:

Ջուգադրելով բրիտանական և հայկական հեքիաթներում ժամանակային դանդաղ ընթացքը՝ նկատում ենք, որ բրիտանական որոշ հեքիաթներում իրական

²¹ Հայ ժողովրդական հեքիաթներ, շ. 4, Մարջում Խոջի հեքիաթը, Երևան, ՀՄՍՀ ԳԱ Հրատ., 1963, 521 էջ:

²² Irish Fairy Tales, Folk Tales and Fables. Oisín in Tír na n Óg.

<https://fairytalez.com/region/irish/>

²³ Հայ ազգագրություն և բանահյուսություն, շ. 25, Իջևան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2008, 491 էջ:

²⁴ Հայոց բանահյուսական մշակույթը, Կարս, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2013, 738 էջ:

Ժամանակի փոփոխությունը, ի տարբերություն հայկականի, սերտ կապված է գերբնական էակների՝ մասնավորապես փերիների հետ: Կաղապարային տեսանկյունից նման պոեմները համարում ենք **փերիների աշխարհը ժամանակի առեղծված է** փոխաբերական կաղապար: Այս ճանաչողական կաղապարի հիմքում նույնպես **Ժամանակի փոփոխություն-ժամանակի դանդաղում-իրական ժամանակի վերականգնում** պատկեր-սխեման է, որն արտացոլվում է, օրինակ, Դ. Աշխիմանի գրի առած «Այց փերիների երկիր» և «Օերացած հարսնացուն»²⁵ հեքիաթներում:

Երկրորդ ենթազվի երրորդ ենթաբաժնում (**«Ժամանակի տարրնկալումը»**) ուսումնասիրվել և վերլուծվել են հեքիաթներում վաղնջական մարդու *ժամանակ* հասկացության տարբերակային ընկալումները: Առաջարկվել է **ժամանակը տարրնկալում է** փոխաբերական կաղապարը, որի հիմքում ընկած է **ժամանակ-այլ գործողություն-ժամանակի այլընկալում** պատկեր-սխեման:

Կելտական “The Coming of Lugh” հեքիաթի հերոս Դագդայի տավիղի դյուրական մեղեդին դառնում է ժամանակի տարրնկալման միջոց *“When he plays on it, the four Seasons-Spring, Summer, Autumn, and Winter-pass over the earth”*:²⁶ Տրամաբանորեն հեքիաթում տարվա չորս եղանակների ընթացքը չի վերաբերում ժամանակի իրական հոսքին: Սա փոխաբերականացված կաղապար է արտապատկերելու և՛ մեղեդին, և՛ հերոսի ժամանակային յուրովի ընկալումն այլ գործողության միջոցով: Այստեղ ակնհայտ գործ ունենք նաև չափազանցության հետ: Հերոսի մեղեդու անզուգականությունը փոքր-ինչ չափազանցված է, որն ավելի տպավորիչ ու ազդեցիկ է դարձնում դրվագը:

Մեր ուսումնասիրած հայկական հեքիաթների շարքում **ժամանակը տարրնկալում է** կաղապարային բնորոշումներ պարունակող հեքիաթները շատ չեն: «Թափազոզի հեքիաթը»²⁷ պատումի մի դրվագում նկարագրվում է հերոսի կողմից ժամանակի թվացյալ երկարումը, որը համընկնում է ներդառնալիցության այն դրույթի հետ, ըստ որի՝ տհաճ ժամանակը երկար է թվում: Այստեղ ոչ թե գործողությունն է դառնում ժամանակային միջոց, այլ խորը զգացումն է աղջկա հանդեպ դառնում է ժամանակի համանման արտապատկերման միջոց: Նշենք, որ այս դրվագում մենք գործ ունենք նաև չափազանցության լեզվառճանհանարի հետ:

Եզրակացության մեջ ամփոփվում են ուսումնասիրության հիմնական արդյունքները.

1. Ճանաչողական լեզվաբանության ներկայացուցիչները լեզվի առանձնահատկություններն ու գործառույթները վերլուծելիս առաջնային

²⁵ Ashliman D. Abducted by Aliens, 1999–2022.

<https://sites.pitt.edu/~dash/abduct.html#kelly>

²⁶ Young E. The Coming of Lugh. Celtic Wonder Tales, 1910.

<https://sacred-texts.com/neu/celt/cwt/cwt07.htm>

²⁷ Հայ ժողովրդական հեքիաթներ, շ. 4, Թափազոզի հեքիաթը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1963, 521 էջ:

կարևորություն են տալիս ճանաչողությանը: Ճանաչողական լեզվաբանության դրույթների միջոցով հեքիաթի տեքստում *ժամանակ* հասկացույթի առկայացման վերլուծությունն ընդգծում է վերջինիս արտապատկերման համընդհանուր բնույթը:

2. Համադրելով տարբեր հետազոտողների ուսումնասիրությունները՝ հրաշապատում տեքստը համարում ենք ոչ թե անժամանակյա, այլ մեկուսացված աշխարհ՝ մեկուսացված ժամանակով, որն էապես տարբեր է իրական ժամանակից: Ավելին, հեքիաթի լեզվանյութը *ժամանակ* հասկացույթի վերլուծության համար այն հնարավոր աղբյուրն է, որտեղ արտացոլվում է մարդու ճանաչողության ընդհանուր պատկերը, և հնարավորություն է ընձեռվում *ժամանակ* հասկացույթը վերլուծել ոչ թե անհատի, այլ մի ամբողջ հանրության ըմբռնումների հիման վրա:

3. Հեքիաթներում ժամանակը հաճախ առկայանում է տարածական եզրույթներով, քանի որ տարածքը հստակ է, ժամանակը՝ ոչ: Հետազոտության արդյունքում առաջարկվել է տարածական կարգերով ժամանակի հայեցակարգավորման հետևյալ կադապարումը՝ կետ, միջակայք, ուղղագիծ, շրջան, շրջագիծ և շրջանի հատված, որոնք որպես գերակա կարգ իրենց մեջ ներառում են ենթակարգեր:

4. Բրիտանական և հայկական հեքիաթներում հանդիպող *ժամանակ* հասկացույթի առկայացման լեզվական միջոցներն ունեն գուգամետ և տարամետ հատկանիշներ, որոնք պայմանավորված են ոչ միայն լեզվական չափանիշներով, այլև ազգային մտածողության տարբերություններով, յուրաքանչյուր երկրին բնորոշ բնապատկերներով և այլ արտաքին ազդեցության գործոններով:

5. Ե՛վ բրիտանական, և՛ հայկական հեքիաթներում ժամանակի հայեցակարգավորման միջոցներից է հեքիաթի սյուժեի զարգացման ուղին, որտեղ կարևորվում են տարածական ու ժամանակային տեղափոխությունները: Երկու լեզուների հեքիաթներում բարի և չար կերպարների համար տարածական ուղղությունները տարբեր են: Բարի հերոսը վերադառնում է այն վայրը, որտեղից սկսել է պատումը, իսկ չար հերոսը սովորաբար չի ունենում տարածական տեղափոխություն. նույնիսկ էթե առկա է տարածական տեղափոխություն, միևնույն է, հետ վերադարձ չկա: Ժամանակի ընթացքը գրեթե նույնական է երկու ժողովուրդների հեքիաթներում: Հեքիաթն սկսվում է անորոշ ժամանակով, ունենում է որոշակի զարգացում և ավարտվում դարձյալ անորոշ ժամանակով:

6. Հեքիաթի անքակտելի կառուցվածքային մաս կազմող կայուն բանաձևերը հանդես են գալիս հատուկ գործառնություններով: Դրանք դիտարկվում են որպես ճանաչողական կադապարներ, որոնց հիմքում անիրական ու անորոշ ժամանակն է:

7. Հեքիաթի պատումում ժամանակի դրսևորումները դիտարկվում են որպես հասկացական փոխաբերություններ (ժամանակը շարժվող սուբյեկտ է, ժամանակը տարածություն է, ժամանակն առարկա է) և փոխանունություններ (ժամանակի արտապատկերումը ավանդական տոների միջոցով, ժամանակի արտապատկերումը գյուղատնտեսական աշխատաքների միջոցով, ժամանակի առկայացումը կենցաղավարության միջոցով, ժամանակի առկայացումը բնության երևույթների միջոցով, ժամանակի առկայացումը պատմական նշանակություն ունեցող անձանց անունների միջոցով (իրական, անիրական):

8. Զուգադրվող լեզուների հեքիաթներում ժամանակային ակնթարթայնությունը դիտարկվում է որպես փոխաբերական կաղապար՝ *ակնթարթայնությունը ժամանակի խնայողություն է*, որի հիմքում *կախարդանք-ակնթարթայնություն-ժամանակի խնայողություն* պատկեր-սխեման է, ինչն էլ նպատակաուղղված է հեքիաթի տեքստին հակիրճություն հաղորդելուն: Ժամանակի դանդաղ հոսքը համարվում է *ժամանակի դանդաղ հոսքն առեղծված է* փոխաբերական կաղապար, որը խարսխված է *իրական ժամանակի փոփոխություն-ժամանակի դանդաղեցում-իրական ժամանակի վերականգնում* պատկեր-սխեմայի վրա: *Ժամանակ* հասկացության սուբյեկտային ընկալումներն արտապատկերվում են *ժամանակը տարրնկալում է* փոխաբերական կաղապարով, որի հիմքում ընկած է *ժամանակ-այլ գործողություն-ժամանակի այլընկալում* պատկեր-սխեման:

Աշխատանքի հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. A Spatial Model of Conceptualization of Time: With Special Reference to English and Armenian Fairy Tales// *International Journal of Language and Culture*, vol. 9 (2), 2022, p. 233-257 (co-author Y. Mkhitaryan) Scopus. <https://doi.org/10.1075/ijolc.21071.mkh>
2. Space and Time Transference of Main Characters in British and Armenian Fairy Tales// *Armenian Folia Anglistika*, vol. 18 No. 1 (25), 2022. (co-author Y. Mkhitaryan) <https://doi.org/10.46991/AFA/2022.18.1.053>
3. Ժամանակի հայեցակարգավորումը բրիտանական և հայկական հեքիաթներում. փոխաբերություն և փոխանունություն// *Օտար լեզուները բարձրագույն դպրոցում*, vol. 26, No 2 (33), Երևան, Երևանի պետական համալսարանի հրատ., 2022, էջ 42-58.

Actualization of the Concept of Time in British Folktales
(with special reference to Armenian folktales)
Summary

The present dissertation is devoted to studying the actualization of the concept of *time* in British folktales compared with those in Armenian.

Thus, **the object** of the thesis is the actualization of the concept of *time* in British and Armenian folktales. **The subject matter** of the research is the linguistic means of the conceptualization of time in British and Armenian folktales.

The relevance of the investigation is conditioned by the growing interest in text research from the perspective of cognitive linguistics. Analyzing the conceptualization of time at the intersection of language and consciousness contributes to a multi-layered and in-depth study of linguistic means of expressing time. In addition, the comparative analysis of the concept of *time* in the light of cognitive linguistics reveals specific semantic features characteristic of the folktales of the two countries and provides a more profound understanding of the manifestation of national mentality in the context of the targeted genre.

The purpose of the research work is to examine various linguistic means of the conceptualization and mapping of time in the framework of cognitive linguistics based on British folktales compared with those in Armenian.

To achieve this goal the following **objectives** have been set forth:

- ❖ to view the close relationship between language and cognition in linguistics,
- ❖ to study various approaches to the concept of *time* in folktales, emphasizing the need to investigate time within the framework of cognitive linguistics;
- ❖ to develop a spatial model of conceptualization of time based on cognitive principles,
- ❖ to study convergent and divergent features of the linguistic means of conceptualization of the concept of *time* which may be derived not only from the examination of linguistic means but also based on national mentality as well as on diverse country landscapes of the two countries;
- ❖ to elucidate spatial and temporal transference of main characters in British and Armenian folktales;
- ❖ to identify and separate the structural and functional features of conceptualization of time in folktale formulas;
- ❖ to give the classification of the most frequently used conceptual metaphors and metonymies of the conceptualization of time highlighting their cognitive features;
- ❖ to identify deviations of time expression in British and Armenian folktales.

The scientific novelty of the work is established by the fact that for the first time, a suggestion is made to map the actualization of the concept of *time* in British folktales in the light of cognitive linguistics. Also, for the first time, the actualization of the concept of *time* is examined on the basis of the comparative study of British and Armenian folktales, highlighting the similarities and differences in the actualization of time in both languages.

The theoretical value of the dissertation is manifested in the outcomes of the research which may contribute to the further development of folktale and cognitive studies. The investigation can make a certain contribution to the expansion and enrichment of comparative analysis. The modeling suggested in the paper can serve as a basis for new research which will be directed to the study of other elements and/or characteristics of folktales.

The practical value of the thesis paper is conditioned by the fact that the results of the investigation can be applied in lectures and seminars of cognitive linguistics, folkloristics, linguo-

folkloristics and comparative stylistics. The data obtained from the study may be used in the analysis of folktales and other linguo-cognitive text studies.

The dissertation consists of an introduction, three chapters with respective subchapters, notes, a conclusion, and references.

Лусине Мадатян
Актуализация концепт времени в британских народных сказках
(в сопоставлении с армянским)
Резюме

Настоящая диссертация посвящена изучению актуализации концепт времени в британских народных сказках в сравнении с армянскими на основе когнитивной лингвистики.

Объектом исследования является актуализация концепт времени в британских и армянских народных сказках. **Предметом** исследования являются лингвистические средства концептуализации времени в британских и армянских народных сказках.

Актуальность исследования обусловлена растущим интересом к текстовому анализу с точки зрения когнитивной лингвистики. Анализ концептуализации времени на стыке языка и сознания позволяет проводить многоуровневое и глубокое исследование лингвистических средств выражения концепта времени. Кроме того, сравнительный анализ концепта времени в контексте британских и армянских народных сказок в свете когнитивной лингвистики раскрывает специфические семантические черты, характерные для народной сказки, и обеспечивает более глубокое понимание проявления языкового мышления в рамках народной сказки.

Целью данной работы является исследование различных лингвистических средств концептуализации и обозначения времени в свете когнитивной лингвистики на базе британских сказок в сравнении с армянскими (сказками).

Для осуществления этих целей были поставлены следующие **задачи**:

- ❖ проанализировать неразрывную связь между языком и познанием в когнитивной лингвистике, изучить различные подходы к концепту времени в сказках и подчеркнуть целесообразность изучения концепта времени с позиций когнитивной лингвистики,
- ❖ создать модель концептуализации времени на основе когнитивной лингвистики,
- ❖ выявить языковые средства для реализации данной модели и указать на те различия их выражения, которые могут быть выведены не только из языковых особенностей, но также из разницы национального мышления и своеобразности ландшафта двух стран,
- ❖ описать пространственное и временное передвижение главных героев британских и армянских сказок на основе определенных сказок,
- ❖ выделить структурные и функциональные особенности концептуализации времени в сказочных формулах,
- ❖ классифицировать наиболее часто используемые концептуальные метафоры и метонимии для выражения концептуализации времени в британских и армянских сказках с акцентом на когнитивный характер их репрезентации,
- ❖ указать на определенные различия в выражении концепта времени в британских народных сказках в сравнении с армянскими сказками.

Научная новизна данной диссертации заключается в том, что впервые предпринята попытка выделить сходства и различия актуализации времени в британских и армянских народных сказках с позиций когнитивной лингвистики. Кроме того, впервые предпринята попытка применения моделирования концептуализации времени в

британских народных сказках в свете когнитивной лингвистики, сравнивая ее с армянскими народными сказками.

Теоретическая значимость диссертации подтверждается тем, что результаты исследования могут способствовать дальнейшему развитию научных исследований в области фольклористики и когнитивной лингвистики. Исследование может внести определенный вклад в расширение и обогащение сравнительного метода анализа. Предложенная модель может послужить основой для новых исследований, направленных на изучение других проявлений народных сказок.

Практическая значимость работы определяется тем, что результаты исследования могут быть применены на лекциях и семинарах по когнитивной лингвистике, фольклористике, лингвофольклористике и сравнительной стилистике. Полученные данные из исследования могут быть использованы в анализе народных сказок и других лингвокогнитивных текстовых исследованиях.

Диссертация состоит из введения, трех глав с соответствующими подразделами, примечаний, заключения и списка использованной литературы.

A handwritten signature in black ink, appearing to be 'L. Shif' or similar, written in a cursive style.